8123

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հ. Սիմիդյան

«18» 05 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0055-22

Ձեռնարկողը՝ ***«ՎԱՅՔ ՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ***
Վայոց ձորի մարզ, Ջերմուկի խճ./շ /14/ 48 Վայք 3801

Գործունեությունը՝ ***Ազատեկի կրաքարերի հանքերևակմում հետախուզման և գնահատման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Վայոց ձորի մարզ, Վայք համայնքի Ազատեկ բնակավայր

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի՝ պարտականությունները կատարող Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 9 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0055-22
«18» 05 2022թ.

Ազատեկի կրաքրերի հանքրևակումում հետախուզման և գնահատման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ՎԱՅՔ ՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Վայոց ձորի մարզ, Վայք համայնքի Ազատեկ բնակավայր

Ներածական մաս. Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 2)-րդ կետի՝ Ազատեկի կրաքարերի հանքերևակումում հետախուզման և գնահատման աշխատանքները դասակարգվում է որպես «գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

«Վայք Ռեսուրսիս» ՍՊ ընկերությունը նախաձեռնում է իրականացնել երկրաբանահետախուզական աշխատանքներ Վայոց ձորի մարզի Ազատեկի կրաքարերի հանքերևակման տարածքում:

Նախատեսվում է հետախուզման աշխատաքների արդյունքում գնահատել կրաքարերի պիտանելիությունն որպես կրի հումք ԳՈՍ 23671-2020, ՀՀ ՏՊ 00298643,2632-2001, СТ АрмССР 644-75, ТУ48-5-40-73, ТУ48-7-2-77, ГОСТ 23671-2020, ГОСТ 5331-63, РСТ ЛитССР263-72, ОСТ 21-37-78 և այլ ստանդարտների, նորմերի տեխնիկական պահանջներին համապատասխան վերջնաարտադրանքների արտադրությունը:

Նկարագրական մաս. Ազատեկի հանքերևակումը գտնվում է Վայոց ձորի մարզի Վայք համայնքի տարածքում, հանքերևակումի հարավային սահմանն անցնում է Ազատեկ բնակավայրից 700մ հեռավորության վրա, հյուսիսային սահմանը՝ Վայքից 4 կմ դեպի հարավ:

Նախատեսվում է կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքներով պաշարների ճշգրտմամբ և հաշվարկմամբ կազմել երկրաբանական հաշվետվություն արդյունաբերական կարգով պաշարների վերահաշվարկմամբ և ՏՏՀ-ի հիմնավորմամբ:

Շրջանի երկրաբանական կառուցվածքում հիմնականում մասնակցում են վերին էոցենի հրաբխանստվածքային գոյացումները, միջին չորրորդական հասակի անդեզիտ-բազալտային լավայի հոսքերը, ինչպես նաև հիմնականում դիաբազապորֆիրային կազմության ենթահրաբխային մարմինները և գրանոդիորիտային կազմության փոքր

ինտրուզիվ մարմինները: Նշված հասակի գոյացումները ուսումնասիրվող շրջանում հիմնականում ներկայացված են հրաբխային ապարներով (ունեն անդեզիտ-բազալտային և անդեզիտային կազմություն) և տրավերտիններով: Առաջինները տարածված են հիմնականում աշխատանքների գոտու հյուսիս-արևելյան և մասնակիորեն արևելյան մասում ծածկույթների տեսքով, վերածածկելով միջին-էոցենի նստվածքները:

Ուսումնասիրվող շրջանում ինտրուզիվ գոյացումներն ունեն սահմանափակ զարգացում, մերկանում են արևմտյան և հյուսիս-արևմտյան մասում, որտեղ կազմում են ապարազանգվածային մարմիններ: Ապարագիտական առումով դրանք ներկայացված են հիմնականում գրանիտոիդային, հազվադեպ՝ քվարց-դիորիտներով: Դրանք ընդհատում են միջին էոցենի գոյացումները: Տեսանելի կերպով շատ դեպքերում ունեն թարմ տեսք, գույնը հիմնականում գորշ, վարդագույն–գորշ է, միջին հատիկավոր են:

Երկրաբանահետախուզական աշխատանքները կատարվելու են «Վայք Ռեսուրսիս» ՍՊԸ ֆինանսական միջոցների հաշվին՝ պայմանագրային հիմունքներով: Երկրաբանահետախուզական աշխատանքների նպատակն է հաստատել տեղամասի օրգանածին կրաքարերի պիտանելիությունը կրի արտադրության համար, ԳՈՍ 23671-2020, ՀՀ ՏՊ 00298643,2632-2001 և վերը նշված այլ ստանդարտների տեխնիկական պահանջներին համապատասխան:

Իր աշխարհագրական դիրքով Ազատեկի հանքերևակումը գտնվում է շատ բարենպաստ պայմաններում: Հանքերևակման հարավ-արևմտյան և հարավային թևերով անցնում է գրունտային ավտոճանապարհը, որը կապում է Ազատեկ գյուղը և Կաբախլու նախկին բնակավայրը, հետևաբար՝ հանքերևակումը արդեն կապված է բնակավայրերի հետ:

Նախատեսվող գործունեության տարածքում սողանքներ չկան, լանջերի թեքությունը խիստ չեն և նման են բլրա թեքատային կտրվածքի:

Հաշվի առնելով նախատեսվող գործունեության տարածքի լեռնաժայռային ռելիեֆը, կարելի է նշել, որ տարածքում գրունտային ջրերը բացակայում են: Առկա են ֆիլտրացիոն ջրերի ներքին հոսքեր, որոնք երբևէ չեն ուսումնասիրվել և ունեն բացառապես տեղումներից առաջացող սնուցումներ:

Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է հետախուզական աշխատանքներ, որոնց արդյունքում մասշտաբային հողային աշխատանքներ չեն իրականացվելու, ուստի անհրաժեշտ է նշել, որ նախատեսվող գործունեության արդյունքում պատմամշակութային արժեք համարվող օբյեկտներ չեն վնասվելու, կիրառվելու են նաև պատահական գտածոների ընթացակարգ, որի միջոցով տարածքում կատարվող ցանկացած աշխատանք կլինի վերահսկելի և վնասակար ազդեցության չի ենթարկվի:

Ուսումնասիրվող տեղամասում և հարակից տարածքներում բնական էկոհամակարգերը ներկայումս խիստ փոփոխված և դեգրադացված են: Հարկ է նշել, որ ուսումնասիրվող տեղամասում բացակայում են ինչպես հազվագյուտ էկոհամակարգեր, այնպես էլ կենդանիներ և բույսեր, բուն նախատեսվող աշխատանքների համար ընտրված տեղամասերում բուսականությունը գրեթե բացակայում է:

Քանի որ, բուն գործունեության տարաքծում բնական էկոհամակարգերը ներկայումս խիստ փոփոխված և դեգրադացված են, այդ իսկ պատճառով հայտում նշված, կենսաբազմազանության, այդ թվում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակների մասին տեղեկատվությունը ներկայացված է տարածաշրջանի կտրվածքով:

Ամենամոտ բնության հուշարձանը գտնվում է ուսումնասիրվող տարածքից ավելի քան 3կմ հեռավորության վրա, ուստի կարելի է փաստել, որ իրականացվող աշխատանքները ազդեցություն չեն ունենա բնության հուշարձանների վրա:

Հայցվող 111,63 հա մակերեսով ընդերքօգտագործման տարածքի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են՝ Հյս.լայ. 39°39′51,64″;Արլ.երկ. 45°26′11,91″ և եզրագծվում է ARM WGS -84(ARMREF02) համակարգով հետևյալ կոորդինատներով՝.

	X	Y
1.	8536830	4392670
2.	8537200	4393060
3.	8537970	4392960
4.	8537970	4392060
5.	8537600	4391780
6.	8537200	4391970
7.	8536830	4392360

Ազատեկի հանքերևակման կրաքարերի հեռանկարային պաշարները կազմում են մոտավորապես 25-30 մլն. մ^3 :

Ազատեկի հանքերևակման կրաքարերը, ինչպես վերը նշվել է, ներկայացված են մոտ 1.1 ք.կմ մակերես ունեցող հիմնական խութային մարմնով, և մոտ 0.24 ք.կմ մակերես ունեցող համեմատաբար փոքր մարմնով՝ այդ մարմնից պոկված և ներկայումս 220մ վրա տեղադրված:

Հանքերևակումը գտնվում է բարձրության վրա, որը ստեղծում է հարմար լեռնատեխնիկական պայմաններ՝ ինչպես հետախուզության, այնպես էլ շահագործման համար:

Վերը նշված հանգամանքները և օրգանածին կրաքարերի բարձր որակը հիմք է տալիս համարել Ազատեկի հանքերևակումը շահութաբեր և հեռանկարային, և առաջարկել հետախուզական աշխատանքներ, որի արդյունքների հիման վրա կատարել պաշարների գնահատում:

Մակրոսկոպիկորեն կրաքարերը ներկայացված են կրեմագույն, թույլ-շագանակագույն, բաց գորշ, պինդ, միաքար, շատ ամուր ապարներով: Ապարում հաճախ կարելի է հանդիպել մաքուր, սպիտակ կալցիտով ներկայացված տեղամասեր: Ճեղքվածներում առկա են մանրաբյուրեղներ, որոնցով լցված են խոռոչները և ճաքերը:

Ազատեկի կրաքարի հանքերևակման ժամանակակից ջրաբերուկային նստվածքները, որոնք ներկայացված են ջրաբերուկներով և ողողաբերուկներով, ունեն սահմանափակ մակերեսային տարածում:

Հանքերևակման երկրաբանական կառուցվածքում մասնակցում են տուֆավազաքարերով, տուֆակոնգլոմերատներով ներկայացված միջին էոցենի ապարները, վերին էոցենի օրգանածին կրաքարերը, ինչպես նաև ժամանակակից ալյուվիալ- դելյուվիալ նստվածքները:

Մեծ խութային մարմնի արևելյան մասում կրաքարերը ծածկված են ալյուվիալ-դելյուվիալ նստվածքներով՝ 400x200մ մակերեսով, ինչպես նաև տուֆաավազաքարերով:

Ալյուվիալ- դելյուվիալ նստվածքները ներկայացված են ավազակավային զանգվածի շրջակա միջավայրի ապարների բեկորներով (կրաքարեր, տուֆավազաքար, տուֆակոնգլոմերատներ): Ապարների բեկորները հիմնականում սրածայր, չգլդոնված, անձև են:

Բեկորների չափը տարբեր է, կախված է տեղաշարժի հեռավորությունից և հասնում է մինչև 25-30 սմ:

Ալյուվիալ-դելյուվիալ նստվածքների հզորությունը տարբեր է, հիմնականում տատանվում է 0.2-0.3մ, սակայն երբեմն հասնում է 1.0–1.2մ:

Ազատեկի օրգանածին կրաքարերի հանքերևակումը իրենից ներկայացնում է մեղմաթեք, հաճախ բաց մերկացումներով, երբեմն ժայռային հատավծներով տարածք: Ուսումնասիրումը հանքերևակման տարածքում հետախուզական աշխատանքներին զուգընթաց նախատեսվում է իրականացնել, տեղամասում առկա բնական մերկացումներից նմուշառմամբ և փաստագրմամաբ, երկրաբանական առանձնահատկությունները պարզաբանելու համար:

Նախատեսվում է հորատել սյունակային հորատմամբ 8 հատ ուղղաձիգ հորատանցք, ընդհանուր 335 գծամետր, պարզաբանելու համար կրաքարերի որակական հատկանիշները ինչպես նաև հանքերևակման երկրաբանակառուցվածքային առանձնահատկությունները, նախկինում կատարված որոնողական աշխատանքների ժամանակ եզրագծված կրաքարերը ունեն շուրջ 1.1 քառ կմ մակերես: հիմնականում գոյություն ունեն հորատման համար հարմար անհրաժեշտ մատույցային ճանապարհներ: Հորատումը կկատարվի 112 և 93մմ տրամագծերով կարծր համաձուլվածքային թագիկներով, Atlas Copco CS14 մակնիշի ինքնագնաց հաստոցի միջոցով:

Թիվ 1,2,3,4,5,6 հորատանցքերով և դեպի եզրերը արտարկումով կապահովվի Բկարգի պաշարների հավաստման և

ներկայացուցչականության վերաբերյալ պահանջը: Թիվ 7,8 և վերը նշված հորատանցքերի դեպի եզրերը արտարկված մնացած պաշարները կվերագրվեն C1 կարգին:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալները հետևյալն են ըստ տեսակների՝

- հորատահանուկի փաստագրում – 335 գծ.մ,
- բնական մերկացումներ 10 հատ:

Կրաքարերը նախատեսվում է ուսումնասիրել որպես կրային հումք: Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից և բնական մերկացումներից:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է.

- հորատահունուկի նմուշարկումը (սեկցիայի երկարությունը մինչև 5մ) իրականացնել անընդհատ տիրույթներով - 67 նմուշ,
- մենաքարի նմուշ բնական մերկացումներից ընդհատվող տիրույթներով - 10 հատ (20x20x20սմ),
- քիմիական կազմը որոշելու նպատակով - 77 նմուշ,
- ֆիզիկամեխանիկական հատկությունների ծավալին կշռի որոշման նպատակով 5 նմուշ
- պետոգրաֆիական և միներալոգիական կազմի ուսումնասիրություն - 5 նմուշ,

Ընդամենը 87 նմուշ:

Վերցված բոլոր 87 նմուշները ենթարկվելու են համապատասխան լաբորատոր ուսումնասիրությունների և փորձարկումների «Անալիտիկ» ՓԲԸ լաբորատորիայում և այլ մասնագիտացված կազմակերպություններում:

Կիսաարտադրական տեխնալոգիական հետազոտությունների նպատակով փորձնական հանույթ չի նախատեսվում: Չի նախատեսվում նաև փորձնական հանույթի արդյունահանում, իրականացվելու է միայն նմուշառում հորատանցքից դուրս եկող հորատահանուկից: Յուրաքանչյուր նմուշի կշիռը շուրջ 3 կգ:

Հորատման աշխատանքների արդյունավետ իրականացման համար և բնապահպանական նկատառումներից ելնելով կազմակերպվելու է հորատման լուծույթի

օգտագործման փակ շղթա: Կիրառվող հորատման լուծույթը պատրաստվելու է հատուկ տակառներում, կիրառումից հետո հատուկ խողովակով մոտեցվելու է վիբրացիոն մաղերի մոտ, հորատման շլամը տարանջատվելու է, իսկ հեղուկ զանգվածը ուղղվելու է պարզեցման տարողություն, որտեղից նորից օգտագործվելու է լուծույթի պատրաստման համար:

Հորատման ժամանակ կօգտագործվեն նախկինում կառուցված ճանապարհները: Նախատեսվում է մոտ 40մ^2 մակերեսով 8 հորատման հարթակների մաքրում մեխանիկական եղանակով, մաքրման աշխատանքների մոտավոր ընդհանուր ծավալը՝ 200մ^3:

Հորատման հարթակներին մոտենալու համար, օգտագործվելու են տեղամասում գոյություն ունեցող գրունտային ճանապարհները, վերջիններս բարեկարգելով:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

Ազատեկի կրաքարերի երկրաբանահետախուզական և գնահատման աշխատանքների ընթացքում հնարավոր են ազդեցություններ մթնոլորտի, մակերևութային ջրերի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի վրա: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսումնասիրվող տարածքում նախատեսվող դաշտային աշխատանքները փոքր ծավալով են լինելու, կարելի է փաստել, որ կենսաբազմազանության վրա ազդեցությունը կլինի ոչ էական: Տվյալ ազդեցությունները բնութագրվում են՝

- մթնոլորտային օդ արտանետումներով՝ երկարաբանհետախուզական աշխատանքների ընթացքում կիրառվող ավտոտրանսպորտը և սարքավորումները հնարավոր է հանդիսանան վնասակար գազերի և փոշու արտանետման աղբյուր: Փոշու արտանետումներ կանխատեսվում եմ հորատման հրապարակների շինարարության, առուների և հետախուզահորերի անցման, ճանապարհների վերանորոգման և կառուցման, ինչպես նաև աշխատանքները սպասարկող ավտոտրանսպորտի տեղաշարժման ժամանակ,
- ջրային ավազանի աղտոտում չի կանխատեսվում, քանի որ երկրաբանական աշխատանքների տեխնոլոգիական ցիկլում նախատեսված չէ որևէ թունավոր, շրջակա միջավայրի նկատմամբ ագրեսիվ նյութերի կիրառում: Հորատման աշխատանքների արդյունավետ իրականացման համար և բնապահպանական նկատառումներից ելնելով կազմակերպվելու է հորատման լուծույթի օգտագործման փակ շղթա: Հեղուկ զանգվածը ուղղվելու է պարզեցման տարողություն, որտեղից նորից օգտագործվելու է լուծույթի պատրաստման համար,
- հողային ծածկույթի վրա միակ ազդեցություն նախատեսվող գործունեության հետևանքով կարող է լինել կարող է լինել հորատման արդյունքում: Քանի որ հորատման բոլոր կետերը և հորատահրապարակները տեղակայված են լինելու ոչ գյուղատնտեսական հողերում, ապա բացասական ազդեցությունը կլինի նվազագույն,
- բուսական և կենդանական աշխարհի վրա երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում դրսևորվելու է որոշակի բացասական ազդեցություն: Հետախուզական փորվածքների անցումը և հորատման հարթակների շինարարությունը հանգեցնում են հողային ծածկույթի և բուսականության ժամանակավոր խախտմանը:

Աշխատանքների ժամանակ կարող են առաջանալ թափոններ: Առաջացող թափոններն են՝ օգտագործված, բանեցված քսայուղերը, նավթամթերքի մնացորդները, հորատման թագիկները, կենցաղային թափոնները: Առաջացող թափոնների բնութագրերն են՝

- հորատման PQ, HQ, NQ տրամագծի ալմաստյա թագագլխիկների մնացորդներ՝ 5-6 հատ,

- PQ, HQ, NQ տրամագծով կարծր համաձուլվածքի թագագլխիկների մնացորդներ՝ 7-9 հատ,
- օգտագործված դիզելային և բենզինային շարժիչների յուղեր՝ 110-140լ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- նավթամթերքների նվազագույն անհրաժեշտ քանակի պահեստավորում անթափանց տակառներով աշխատանքները սպասարկող բեռնատար մեքենայի թափքում: Վառելիքի հիմնական լիցքավորման և քսայուղերի փոխարինման աշխատանքների կատարում հարակից բնակավայրում, համապատասխան ծառայություն մատուցող կայանում,
- գործընթացի հետ կապված օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար: Այդ աշխատանքները իրականացում մասնագիտացված ընկերությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- հնամաշ դետալների ու մասերի հավաքում և հանձնվում որպես մետաղական ջարդոն վերամշակող ընկերությանը՝ պայմանագրային հիմունքներով,
- մեքենաների, հորատման հաստոցի, այլ սարքավորումների շահագործում տեխնիկական սարքին վիճակում,
- փոշենստեցման նպատակով ճանապարհների ջրում տարվա չոր և շոգ եղանակներին: Նախատեսվող գործունեության ընթացքում տեխնիկական նպատակներով օգտագործվող ջուրը գնվելու է հարակից բնակավայրից և ավտոցիստեռնով տեղափոխվելու է աշխատանքների իրականացման վայր: Խմելու ջուրը երևակման տարածք նույնպես տեղափոխվելու է ավտոցիստեռներով,
- կեղտաջրերի հավաքում շարժական զուգարանահանգույցում, որը հետագայում դատարկվելու են հատուկ ծառայության ուժերով,
- աշխատակիցների կենցաղային պայմանների (հանդերձարան, ջրցուղարան) կազմակերպում աշխատանքային խմբի տեղակայման վայրում՝ հարակից բնակավայրում, իսկ հանգստի կազմակերպման նպատակով աշխատանքների իրականացման տարածք շարժական վագոն-տնակի տեղափոխում,
- կենցաղային աղբի համաքում հատուկ անթափանց պոլիէթիլենային տոպրակների մեջ, (մինչև 35լ տարողությամբ), ընկերության սեփական ավտոտրանսպորտով տեղափոխում մոտակա աղբավայրը,
- առաջացող թափոնների (պողպատե թագագլխիկներ, օգտագործված դիզելային և բենզինային շարժիչների յուղեր և քսուկներ) անվտանգ կառավարում: Օգտագործված յուղերի կուտում մետաղյա տարողություններում (տակառներ), այնուհետև ավտոտրանսպորտով տեղափոխվում, ուր նախատեսվում է դրանք վաճառել օգտագործված յուղերի վերամշակմամբ զբաղվող ընկերություններին: Ալմաստյա թագագլխիկների և կարծր համաձուլվածքի թագագլխիկների մնացորդների առաջանալուն պես մեքենաներով տեղափոխում ժամանակավոր պահեստ, որտեղից տրամադրում մետաղի ջարդոն վերամշակող կազմակերպությունների,
- օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչների կարգավորում՝ աղմուկի նվազեցման, շրջանի կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության բացառման նպատակով,
- աշխատանքների ժամանակ աղմուկի և թրթռումների վերահսկողություն և մի շարք այլ բնահպանական միջոցառումներ:

Ջրային ավազանի կեղտոտում տեղի չի ունենա, քանի որ հաներևակման տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր նախատեսված չեն:

Նախատեսվող գործունեության ընթացքում հնարավոր են վթարային իրավիճակներ, բնական աղետներ և անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ: Անբարենպաստ օդերևույթաբանական պայմանների, բնական աղետների և վթարային իրավիճակների հնարավոր դեպքերում շրջակա միջավայրի լրացուցիչ աղտոտումը կանխելու կամ հնարավոր չափով նվազեցնելու համար ընկերությունը մշակել է գործողությունների ծրագիր, որը ներառում է մի շարք համապատասխան միջոցառումներ, որոնցից կարելի նշել՝ անբարենպաստ օդերևութաբանական պայմանների դեպքում՝ ջրցանի ծավալների ավելացում, միաժամանակյա աշխատող մեխանիզմների քանակի կրճատում, անհրաժեշտության դեպքում աշխատանքները դադարեցում:

Բնական աղետների /փոթորիկ, երկաշարժ, հողասահքի վտանգ, անտառային հրդեհներ և այլն/ ժամանակ բոլոր աշխատանքների դադարեցում, անձնակազմի տեղափոխում անվտանգ վայր:

Հորատման հրապարակների նախապատրաստման ժամանակ հողի բերրի շերտի հեռացումն ու կառավարումը կատարվելու է պահանջներին համապատասխան:

Ռեկուլտիվացիայի ենթակա հողի ընդհանուր մակերեսը կազմելու է 1000մ^2, իսկ ծավալը՝ 200մ^3, որտեղ՝ հրապարակներ-320մ^2, ճանապարհ և այլ հարթեցման աշխատանքներ-680մ^2: Աշխատանքները կատարվելու են ձեռքով (անհրաժեշտության դեպքում կներգրավվի տեխնիկա): Ռեկուլտիվացիայի աշխատանքների արժեքը կկազմի 1 200 000 ՀՀ դրամ:

Չնայած այն հանգամանքին, որ գյուղատնտեսական նշանակության հողերում հորատանցքեր չեն պլանավորվել, այնուամենայնիվ հողերի չնախատեսված վնասի փոխհատուցման համար նախատեսված է 0,3մլն դրամ:

Ազատեկի կրաքրերի հանքրևակումում հետախուզման և գնահատման աշխատանքների ընթացքում իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մի շարք մշտադիտարկումներ, որոնք են.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ հունիս-սեպտեմբեր ամիսներին (շոգ և քիչ տեղումներով եղանակին)՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ:
2. Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ,
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ աշխատանքների իրականացման վայրում:
4. Կենսաբազմազանության ուսումնասիրություն, նկարագրում՝ տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն (հստակ դիտարկան կետ նշել հնարավոր չէ, դիտարկումը կատարվելու է երևակման և հարակից տարածքներում):

Նախատեսվող գործունեության մշտադիտարման ծախսերը ընդհանրացվել է թափոնների կառավարման համար նախատեսվող ծախսերի հետ՝ երկու միջոցառման համար մեկտեղ նախատեսվել է 2061000 ՀՀ դրամ, որից 1000000 ՀՀ դրամը կուղղվի թափոնների կառավարման համար, իսկ մնացյալ 1061000 ՀՀ դրամը մշտադիտարկումների իրականացմանը:

Պատճառաբանական մաս. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, փորձաքննության փուլերում, Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Ազատեկ բնակավայրում անցկացված հանրային քննարկումներ ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ արտակարգ իրավիճակների, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Վայոց ձորի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում:

Ամփոփելով Հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել որ, շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

2. Աշխատանքների կատարման ընթացքում առաջնորդվել աշխատողների անվտանգության և առողջության ապահովման համար անհարաժեշտ է առաջնորդվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 23-րդ գլխի պահանջներով:

3. Ուսումնասիրության աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշման պահանջներով՝ իրականացնելով նախնական գնահատման հայտով ամրագրված շրջակա միջավայրի բաղադրիչների՝ մթնոլորտային օդ, հողային ռեսուրսներ, կենսաբազմազանության, մակերևութայի և ստորերկրյա ջրերի մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

4. Անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

5. Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում՝ առաջնորդվել ՀՀ կառավարության «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» թիվ 781-Ն որոշման պահանջներով:

6. Նախքան աշխատանքների իրականացնելը ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի համապատասխան մասնագետի մասնակցությամբ իրականացնել ուսումնասիրություններ՝ ուսումնասիրվող տարածքի և «Ազատեկի» բրածո ֆլորա» բնության երկրաբանական հուշարձանի հետ համընկնումը բացառելու նպատակով և

ուսումնասիրության արդյունքների եզրակացությունը ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն: Ուսումնասիրվող տարածքի և երկրաբանական հուշարձանի հետ համընկման դեպքում բացառել որևէ գործունեություն:
7. Անհրաժեշտ է պարտադիր ապահովել հայտում ներկայացված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
8. Ապահովել և պահպանել բնապահպանական և մշտադիտարկումների ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը:
9. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պահպանել հայտում ներկայացված տեխնոլոգիակա նորմերը, բնապահպանական պահանջների կատարումը: Առաջարկվող մեղմացնող միջոցառումները ընդունել պարտադիր կատարման ենթակա:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՎԱՅՔ ՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ կողմից ներկայացված Վայոց ձորի մարզ, Ազատեկի կրաքրերի հանքրևակումում հետախուզման և գնահատման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն»
ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Ն. Նասիբյան